ԿԱՐԾԻՔ

Մարիամ Գևորգի Այվազյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Կատարումների իրավական պահպանության հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մասին/ Մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք

Թեմայի արդիականությունը:

Հեղինակին հաջողվել է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող գիտական պահանջներին համապատասխան հիմնավորել ընտրված թեմայի արդիականությունը՝ այն պայմանավորելով մի շարք էական և համակարգային բնույթի հանգամանքներով:

Կատարողների իրավունքների պաշտպանությունը պատմականորեն անցել է բարդ և բազմաշերտ էվոլյուցիոն ուղի՝ իրավական պաշտպանության լիակատար բացակայությունից մինչև դրանց միջազգային ճանաչումն ու ազգային իրավակարգերում ամրագրումը: Հատկանշական է, որ միջազգային իրավունքի մակարդակում կատարողների իրավունքների ինստիտուցիոնալ ճանաչումը տեղի է ունեցել համեմատաբար ուշ՝ միայն 1961 թվականին «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին» Հռոմի կոնվենցիայի ընդունմամբ: Այս հանգամանքը վկայում է, որ մտավոր սեփականության իրավունքի տվյալ ենթաճյուղը ձևավորված է հարաբերականորեն վերջերս և դեռևս գտնվում է տեսական իմաստավորման և կիրառական զարգացման շարունակական գործընթացում:

Վերոնշյալն իր հերթին պայմանավորում է ինչպես միջազգային, այնպես էլ ազգային իրավակարգերում առկա մոտեցումների բազմազանությունն ու երբեմն նաև՝ հակասական մեկնաբանությունները: Միաժամանակ, կատարողների իրավունքների պաշտպանության խնդիրը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն՝ պայմանավորված ոչ միայն տեխնոլոգիական առաջընթացի աննախադեպ տեմպերով, այլև երաժշտական և տեսալսողական ինդուստրիաների գլոբալացմամբ և թվային բովանդակության սպառման մոդելների արմատական վերափոխմամբ:

Նշված իրողությունների համատեքստում կատարողների իրավունքների համակողմանի և համակարգված ուսումնասիրությունը ձեռք է բերում հատուկ արդիականություն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական հարթություններում: Առանձնակի կարևորություն ունի կատարողների հիմնական գույքային իրավունքների՝ կատարումների ամրագրումների վերարտադրության, տարածման, հանրությանը հաղորդելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքների խորքային և համալիր վերլուծությունը: Նույնքան էական է նաև առաջին վաճառքի դոկտրինի և կատարողի արդարացի վարձատրության իրավունքի բովանդակության և կիրառման սկզբունքների մեկնաբանումը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի առանձնահատկությունները:

Հեղինակը, համադրելով սեփական պրակտիկ փորձը և ուսումնասիրված մասնագիտական գրականության հարուստ նյութը, հիմնավոր կերպով բացահայտել է ընտրված թեմայի արդիականությունը: Արդիականության հիմնավորման կարևոր բաղադրիչ է նաև այն, որ ատենախոսը ոչ միայն արձանագրել է օրենսդրական բացերը, այլև կատարել է կատարողների իրավունքների պաշտպանության համակարգային վերլուծություն՝ բացահայտելով դրանց դերը մտավոր սեփականության իրավունքի ընդհանուր կառուցվածքում:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Մարիամ Այվազյանի կողմից ընտրված «Կատարումների իրավական պահպանության հիմնախնդիրները» թեման գիտական հետազոտության համար արդիական է, տեսականորեն հիմնավորված և օբյեկտիվորեն անհրաժեշտ:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանին անդրադառնալիս հարկ է ընդգծել, որ հայրենական իրավաբանական գիտության մեջ կատարողների իրավունքների պաշտպանության խնդիրներին նվիրված համալիր և համակարգային ուսումնասիրությունները գրեթե բացակայում են: Ներկայացված աշխատանքը, ըստ էության, առաջին ամբողջական գիտական հետազոտությունն է տվյալ բնագավառում, որը ներկայացվել է պաշտպանության:

Ավելին, ատենախոսությունում քննարկված մի շարք հիմնահարցեր, մասնավորապես, թվային դարաշրջանում վերարտադրության իրավունքի առանձնահատկությունները, թվային սպառման կամ առաջին վաճառքի դոկտրինը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ներկայացված առաջարկությունները, բնույթով նորույթ են և ունեն էական տեսական նշանակություն՝ նպաստելով մտավոր սեփականության իրավունքի տվյալ ենթաճյուղի հետագա զարգացմանը:

Հեղինակի կողմից իրականացված հետազոտությունը հիմնված է ինչպես տեսական հարուստ գրականության, այնպես էլ ներպետական և միջազգային իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև դրանց դոկտրինալ մեկնաբանությունների վրա: Հեղինակի կողմից բարձրացված հարցադրումները բնութագրվում են ոչ միայն ակադեմիական հետաքրքրությամբ, այլև ակնհայտ կիրառական արդիականությամբ՝ պահանջելով տեսագործնական լուծումների ձևակերպում, ինչը պատշաճ կերպով ապահովված է աշխատանքում:

Մեթոդաբանական առումով հեղինակը ճիշտ և հիմնավորված կերպով սահմանել է հետազոտության առարկան և օբյեկտը: Ատենախոսության նպատակը հստակ ձևակերպված է և տրամաբանորեն պայմանավորված է դրանից բխող կոնկրետ խնդիրներով, որոնք առանձնացված են ճշգրտությամբ և վերլուծված՝ անհրաժեշտ խորությամբ: Կարելի է փաստել, որ հետազոտության առաջադրված խնդիրները ամբողջությամբ լուծված են և իրենց արտացոլումն են գտել ներկայացված պաշտպանության ենթակա դրույթներում:

Հետազոտության տեսական հիմքը կազմված է թեմային առնչվող ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային գիտական աշխատություններից: Աշխատանքն առանձնանում է օգտագործված աղբյուրների խորությամբ և մեծ ներառականությամբ՝ ընդգրկելով տվյալ ոլորտին վերաբերող առավել հիմնարար և արդիական դոկտրինալ մեկնաբանությունները:Հեղինակը կիրառել է լայնածավալ արևմտյան գիտական գրականություն, ինչպես նաև ուսումնասիրել է համապատասխան դատական պրակտիկայի և նորմատիվ իրավական ակտերի ընդգրկուն շրջանակ, ինչը վկայում է աշխատանքի բարձր գիտական մակարդակի և աղբյուրագիտական հիմնավորվածության մասին: Հետազոտության կարևոր արժանիքներից է նաև տարբեր իրավական համակարգերում կատարողների իրավունքների պաշտպանության համեմատական վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս ամբողջական և համակարգված պատկերացում կազմել կատարումների իրավական պահպանության վերաբերյալ տարբեր իրավակարգերում ձևավորված մոտեցումների մասին:

Աշխատանքի գիտական նորույթը դրսևորվում է կատարումների իրավական պահպանության հիմնախնդիրների համակարգային, համալիր և տեսագործնական համադրությամբ իրականացված ուսումնասիրությամբ: Նշված վերլուծությունը իրականացվել է՝ հիմքում ունենալով ինչպես համապատասխան տեսական

գրականությունը, այնպես էլ դատական պրակտիկան և գործող նորմատիվ կարգավորումները, հատկապես միջազգային կոնվենցիոն կարգավորումները և դրանց մեկնաբանությունները:

Հետազոտության շրջանակներում հեղինակն առաջարկում է կատարումների տեղն ու դերը մտավոր սեփականության իրավունքի համակարգում, հստակ ձևակերպում է կատարողների գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների շրջանակը, ինչպես նաև առանձնացնում է դրանց պաշտպանության առանձնահատկությունները՝ հաշվի առնելով թվային դարաշրջանին բնորոշ մարտահրավերները: Հարկ է ընդգծել, որ պաշտպանության ներկայացված դրույթները պարունակում են գիտական նորույթ և ընդունելի են:

Հետազոտության արդյունքները փորձարկվել են գիտագործնական և տեսական գիտաժողովներում: Դրանք ներկայացվել են գիտաժողովներում՝ զեկույցների տեսքով, արտացոլվել են մասնագիտական ամսագրերում և գիտական ժողովածուներում հրատարակված հոդվածներում:

Աշխատանքի բովանդակության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով, իսկ ներկայացված առաջարկությունները՝ տեսական և կիրառական առումներով հիմնավորված և ընդունելի են: Համակարծիք ենք նաև հեղինակի կողմից առաջարկվող օրենսդրական փոփոխությունների ընդհանուր ուղղվածության հետ:

Ատենախոսությունում իրականացվել է համակողմանի և խորքային ուսումնասիրություն այն հիմնարար հարցի շուրջ, թե մտավոր սեփականության իրավունքի համակարգում ինչ տեղ պետք է զբաղեցնեն կատարումները: Առանձնակի ուշադրություն է դարձվել այն խնդրին, թե արդյոք կատարումները կարող են օժտված լինել նույն այն յուրօրինակության հատկանիշներով, որոնք բնորոշ են հեղինակային

իրավունքի օբյեկտներին, և արդյոք դրանք ենթակա են պաշտպանության հեղինակային, թե հարակից իրավունքների շրջանակում:

Կատարված վերլուծությունների հիման վրա հեղինակը հիմնավորում է, որ թեև կատարումները կրում են ստեղծագործական բնույթ և ունեն որոշակի յուրօրինակություն, այնուամենայնիվ դրանց էությունը և առանձնահատկությունները, մասնավորապես՝ կատարումների սերտ կապը դրանց հիմքում ընկած գրական և գեղարվեստական ստեղծագործությունների հետ, թույլ չեն տալիս դրանք ներառել հեղինակային իրավունքի համակարգում: Հետևաբար, հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ կատարումները պետք է դիտարկվեն և պաշտպանվեն հարակից իրավունքների շրջանակում՝ սահմանելով կատարողների համար ինքնուրույն և հստակ իրավական կարգավիճակ:

Ուշադրության են արժանի նաև հեղինակի կողմից կատարված վերլուծությունները կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների վերաբերյալ: Հատկապես կարևոր է այդ իրավունքների առավել ամբողջական և համակարգված շրջանակի սահմանումը, որը համահունչ է ինչպես միջազգային պրակտիկայում ձևավորված մոտեցումներին, այնպես էլ կոնվենցիոն կարգավորումներին:

Աշխատանքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում նաև կատարողների գույքային իրավունքների՝ ամրագրման, վերարտադրության, տարածման, հանրությանը հաղորդման իրավունքների ուսումնասիրությունը: Հեղինակը ներկայացրել է միջազգային պրակտիկայում ձևավորված մոտեցումները, այդ թվում՝ Արդարադատության եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Կատարված վերլուծությունների հիման վրա առաջարկվում են վերարտադրության իրավունքի բովանդակության մանրամասն մեկնաբանություններ, ինչպես նաև

իրականացվել է մանրամասն ուսումնասիրություն կատարումների հանրությանը հաղորդման իրավունքի վերաբերյալ:

Փաստարկված և գիտականորեն հիմնավորված են նաև հեղինակի վերլուծությունները թվային դարաշրջանում սպառման իրավունքի կիրառելիության վերաբերյալ: Հաշվի առնելով թվային միջավայրի առանձնահատկությունները՝ ատենախոսությունում քննարկվում է թվային սպառման իրավունքի հնարավոր կիրառությունը՝ հիմնվելով ինչպես ամերիկյան, այնպես էլ եվրոպական դատական պրակտիկայի վրա: Համեմատական վերլուծության արդյունքում հեղինակը հանգում է այն եզրակացության, որ կատարումների թվային ամրագրումների նկատմամբ առաջին վաճառքի դոկտրինը կիրառելի չէ, և սպառման իրավունքը պետք է սահմանափակվի միայն նյութական կրիչների վրա ամրագրված կատարումներով:

Աշխատանքում ներկայացված են նաև այլ կարևոր առաջարկություններ, մասնավորապես՝ կատարողների արդարացի վարձատրության իրավունքի վերաբերյալ: Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Եվրոպական միությունում և դրա անդամ պետություններում առկա վերջին օրենսդրական զարգացումներին: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա առաջարկվում են համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված են կատարողների արդարացի վարձատրության արդյունավետ ապահովմանը:

Թեպետ մենք հիմնականում համամիտ ենք պաշտպանության ներկայացված դրույթներում՝ հեղինակի արտահայտած դիրքորոշումների հետ՝ գնահատելով դրանց գիտագործնական նշանակությունը, պատշաճ գիտական ու տեսական մակարդակը և վերլուծականությունը, այնուամենայնիվ, հեղինակի ուշադրությունն ենք հրավիրում

առանձին վիճահարույց դրույթների վրա, որոնց կապակցությամբ կցանկանայինք լրացուցիչ պարզաբանումներ ունենալ:

Այսպես.

1.Աշխատանքի առանձին հատվածներում, մասնավորապես՝ Հռոմի կոնվենցիայի, ինչպես նաև Պեկինի պայմանագրերին նվիրված վերլուծությունների շրջանակում, հեղինակն անդրադառնում է պրոդյուսերների, կատարողների և հեղինակների իրավունքների փոխհարաբերությունների հիմնախնդիրներին: Հաշվի առնելով, որ կատարողները մտավոր սեփականության իրավունքի այլ սուբյեկտների համեմատ՝ շատ դեպքերում գտնվում են ավելի անբարենպաստ դիրքում, հեղինակը հիմնավոր կերպով առաջադրում է նրանց արդարացի վարձատրության իրավունքի առավել հստակ և մանրամասն իրավական ամրագրման անհրաժեշտությունը, ինչը գիտական և գործնական առումով ունի էական նշանակություն: Դրանով հանդերձ՝ հարկ է արձանագրել, որ աշխատանքում նպատակահարմար կլիներ առավել խորությամբ վերլուծել բարդ ստեղծագործությունների, մասնավորապես՝ ֆիլմերի և այլ տեսալսողական ստեղծագործությունների պարագայում ծագող իրավահարաբերությունների համակցությունը: Խնդիրը հատկապես վերաբերում է տեսալսողական ստեղծագործությունների և ֆիլմերի ամրագրման գործընթացում ֆիլմարտադրողի, հեղինակների և կատարողների միջև իրավունքների բաշխմանը և իրավունքի փոխանցման իրավական մեխանիզմներին:

Նշված խնդիրների համակողմանի ուսումնասիրությունն առանձնահատուկ նշանակություն ունի՝ հաշվի առնելով տեսալսողական ստեղծագործությունների իրավական ռեժիմի բարդ, բազմաշերտ և բազմասուբյեկտ բնույթը, որտեղ համատեղվում են հեղինակային և հարակից իրավունքների տարբեր ինստիտուտներ՝ նորմատիվ և կիրառական մակարդակներում հաճախ առաջացնելով հակասություններ:

Նշված հարցադրումների խորացված վերլուծության անհրաժեշտությունն առավել ընդգծվում է այն հանգամանքով, որ հայաստանյան իրավակիրառ պրակտիկայում, վերոնշյալ սուբյեկտների միջև առաջացող վեճերի լուծման հարցում, փաստացի բացակայում են ձևավորված չափորոշիչներն ու հստակ մոտեցումները:

2.Հեղինակն աշխատանքի 2-րդ գլխում անդրադառնում է հանրությանը հաղորդելու իրավունքի մեկնաբանության առանձնահատկություններին և նշում է, որ հետազոտության շրջանակում նա ելնում է այն տեսակետի դիրքերից, որ հանրությանը հաղորդելու իրավունքը լայն իրավունք է, որը ներառում է հեռարձակման և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները՝ հիմնվելով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության սահմանման վրա:

Նշված իրավունքի մեկնաբանության համատեքստում հեղինակը հենվում է միջազգային կոնվենցիոն կարգավորումների վերլուծության վրա և հիմնավորում է, որ հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի ձևավորումը պայմանավորված է տեխնոլոգիական զարգացման առաջընթացով: Ըստ այդմ, նշված իրավունքը հիմնականում վերաբերում է հանրությանը՝ համացանցային միջոցներով ստեղծագործությունների կամ այլ օբյեկտների հաղորդմանը:

Միաժամանակ, հաշվի առնելով հեղինակի որդեգրած մոտեցումը, ինչպես նաև նրա հետագա քննարկումները հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի վերաբերյալ, պետք է ասել, որ աշխատանքը զգալիորեն կշահեր, եթե հեղինակն առավել համակարգված և կառուցակարգված կերպով ներկայացներ հանրությանը հաղորդելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքների՝ իր իսկ կողմից ձևակերպված հասկացությունները, ինչպես նաև այդ իրավունքների տարբերակման առավել մանրամասն առանձնահատկությունները, այդ թվում՝ հանրությանը հաղորդելու և հանրության համար մատչելի դարձնելու իրավունքների ձևակերպման և տարանջատման հստակ չափանիշները:

3.Աշխատանքում հեղինակն անդրադառնում և համակողմանիորեն ներկայացնում է կատարողների իրավունքների հիմնական շրջանակը՝ ընդգծելով դրանց բովանդակային և իրավական առանձնահատկությունները: Ցանկանում ենք ընդգծել, որ կատարողների իրավունքների բնույթն իր էությամբ այնպիսին է, որ դրանք, որպես կանոն, իրացվում են ոչ թե անհատական, այլ կոլեկտիվ կառավարման մեխանիզմների միջոցով՝ կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների մասնակցությամբ:

Այս համատեքստում կատարողների իրավունքների արդյունավետ իրացումը կապված է այդ կազմակերպությունների գործունեության իրավական կարգավորման, լիազորությունների ծավալի, ինչպես նաև կատարողների և համապատասխան կազմակերպությունների միջև իրավահարաբերությունների բնույթի հստակեցման հետ:

Աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը որոշակիորեն անդրադառնար նաև կատարողների և կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների միջև հարաբերությունների հիմնախնդիրներին, որոնք ունեն կարևոր թե տեսական, և թե գործնական նշանակություն:

Մեր գնահատմամբ՝ ներկայացված նկատառումները չեն նսեմացնում ատենախոսական հետազոտության գիտական որակը և կատարված աշխատանքի նկատմամբ ձևավորված դրական գնահատականը:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրում ենք, որ Մարիամ Գևորգի Այվազյանի **«Կատարումների իրավական պահպանության հիմնախնդիրները»** վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան,

աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի՝ իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ հեղինակի հրատարակած գիտական հոդվածներն էլ արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Պաշտոնական ընդդիմախոս՝
պրոֆեսոր, իրավաբանական
գիտությունների դոկտոր
Ա Մ. ՀԱՅԿՅԱՆՑ

Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա.Մ.Հայկյանցի
ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Ա. Պետրոսյան**